

ՖՐԷՏԷՐԻՔ ՄԱՔԼԷՐ

ՆԱՍԱԿՆԵՐ ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆԻՆ

Ֆրէտէրիք Մաքլէրը (Frédéric Macler) Ֆրանսիացի ականաւոր և բազմհրապարակ հայագէտ է (վախճանուել է 1938 թն)¹։ Հայ ժողովրդի պատմութեան, կրօնի, գրականութեան ու արուեստի տարբեր ճիւղերին վերաբերող յօդուածներով, զեկուցումներով և աշխատութիւններով նա մեծ ծառայութիւն է մատուցել հայագիտութեան։

1905–1938 թուերին Փարիզի Արևելեան կենդանի լեզուների դպրոցում (Ecole des Langues orientales vivantes) հայագէտ Անթուան Մեյէի մահից յետոյ դասուանողելով Հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), Հայոց պատմութիւն և Հայաստանի աշխարհագրութիւն, Մաքլէրը պատրաստել է հայագէտներ։ Մեյէի հետ, 1920 թուին, նա Փարիզում հիմնադրել է Հայագիտական ընկերութիւն (Société des Études Arméniennes) և Հայագիտական հանդէս (Revue des Études Arméniennes), որոնք զոյառեկցին մինչև 1933 թուական։ Ֆրանսիայի լուսաւորութեան նախարարութեան լիազօրութեամբ այցելելով եւրոպական գրադարաններ ու գիւղաններ՝ նա հրապարակ է հանել Հայերի տանջուող պատմական հետաքրքրական տեղեկութիւններ, վաւերագրեր, ձեռագրերի նկարագրութիւններ և յիշատակարաններ, եւրոպայի հայկական գաղութների ժամանակագրութիւններ և այլն։ Նա գիտական ուղեւորութիւն է կատարել նաև Էջմիածին 1909 թուի Յուլիոս-Հոկտեմբեր ամիսներին²։

Մաքլէրը տնօրինել և խմբագրել է La Voix de l'Arménie («Հայաստանի ձայնը») երկամսեայ պարբերականը։ Նա եղել է ջերմ հայասէր. գիտնականի հնարաւորութեան սահմաններում Հայերի կողքին պայքարել է նրանց իրաւունքների համար քաղաքական ասպարէզում։

Արևելեան լեզուների դպրոցի Հայոց լեզուի ամպիոնի մասին հրատարակած մի յօդուածում Անթուան Մեյէն գրել է, որ Ֆրանսիացի հայագէտները միշտ էլ եղել են Հայ բանասերների ու պատմաբանների աշակերտները, այսինքն՝ օգտուել են վերջիններիս գրաւոր և բանաւոր արտայայտած մտքերից ու կարծիքներից, հայագիտական գիտելիքներից։ Այս հանգամանքը յատկապէս երևում է նրանց նամակագրութեան մէջ, որի հրապարակումն այս իսկ առումով ստատորում է հայագիտութեան պատմութեան հարցերի լուսարանմանը։ Այս նպատակով ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում Արշակ Զօպանեանին Մաքլէրի գրած նամակներից ամենից կարեւորները։

¹ Մաքլէրի մասին կարելի է կարգաւ մեր հետեւել յօդուածները։ 1. Ֆրէդէրիք Մաքլէրի ուղեւորութիւնը Հայաստան (Լրաբեր հասարակական գիտութիւնների, Երևան, 1965, 2 (309), էջ 95–99)։ 2. Ֆրէդէրիք Մաքլէրը Հայաստանում (Հայրենիքի ձայն, Երևան, թիւ 47 (121), 15 նոյ. 1967)։ 3. Փարիզի հայագիտական բնկերութեան և հայագիտական հանգէսի մասին (Պատմա-բանասիրական հանդէս, Երևան, 1965, թիւ 2, էջ 241–246)։

² Տե՛ս առաջին ծանօթութիւն։

³ Տե՛ս մեր հրապարակումները։ Անթուան Մեյէի նամակները Հայ բանասերներին (Լեւոն Մսերեանին, Նալբանուր Յովհաննիսեանին, Գալուստ Տէր Սիւրչեանին և Մեսրոպ վարդապետ Մամուլեանին. Բանբեր Հայաստանի արխիւների, 1966, թիւ 1)։ Հրաչեայ Անառեան, Նամակներ Անթուան Մեյէին (Նոյն տեղում, 1966, թիւ 2)։ Անթուան Մեյէի նամակները Արշակ Զօպանեանին և Պողոս Նուպար Փաւային (Նոյն տեղում, 1967, թիւ 1)։

Դարիս օտաջին կէսում Ֆրանսահայ մատուրականութեան ամենից փոյլուն ներկայացուցիչներից է եղել Արշակ Զօպանեանը։ Հայերին վերաբերող գիտական և քաղաքական հարցերով նրան են դիմել չափ հասեր, որոնցից է եղել նաև Մաքլէրը։ Այն տարբերութեամբ սակայն, որ մեր երկու մատուրականների յարաբերութիւնները պաշտօնականից դարձել են բարեկամական, բայց միշտ նոյն նպատակասլացութեամբ՝ ծառայել Հայ ազգին և նրա հոգևոր յատկութիւնների բացայայտման և ծանուցման։

Ստորև հայերէն թարգմանութեամբ հրատարակուող նամակները պահուած են Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիայի Գրականութեան և Արուեստի Թանգարանի Արշակ Զօպանեանի Ֆոնդում, ընդամենը մօտ 180 ինքնագիր-քննագիր նամակ կամ բացիկ։ Սակայն իրականում գրանք չափ տւելի պէտք է լինեն, որովհետև ամբողջ տարիների բացեր կան։ Մինչդեռ, ինչպէս երևում է որոշ նամակներից, նրանք միմեանց գրել են չափթը մի քանի անգամ։

Նամակները մեծ մասամբ ժամագրական բնոյթի են։ Առաջին նամակները 1900 թուականից են։ Մաքլէրի ձեռագիրը գեղեցիկ է, յստակ։ Ա. Զօպանեանի պատասխանները հաւանաբար պահուած են Մաքլէրի դիւանում (Ֆրանսիա)։

Նամակներից պարզուած է, որ Մաքլէրը իր ուսուցիչ Օկրոթ Քարլէրից հայերէն սովորելուց յետոյ չարունակել է պարապել Ա. Զօպանեանի հետ. «Զեզ չափ երախտապարտ կը լինէի, եթէ ցանկանայիք չարունակել ինձ հայերէն ուսուցանել» (1900 թ. 27 Դեկտ. նամակից, թիւ 7098)։ 1901 թ. Սեպտ. 9 նամակում Մաքլէրը խոստանում է տւելի լուրջ պարապել հայերէն։ Հայագիտական իր աշխատութիւնները գրելիս Մաքլէրը միշտ դիմել է Ա. Զօպանեանի գիտելիքների կամ տեղեկութիւնների օգնութեան. 1902 թ. Յուլիսի 19ի նամակում կարդում ենք. «Կարո՞ղ էիք ինձ տեղեկութիւններ տալ՝ 1. երեսօղէմի Հայ թագուհիների մասին 12րդ դարում. 2. վաւերագրեր հայկական արուեստի մասին կամ գոնէ նշել, թէ որտե՞ղ կարող եմ գտնել»։ Որնէ աշխատանք աւարտելուց յետոյ Մաքլէրն այն ենթարկել է Ա. Զօպանեանի քննութեան. այսպէս՝ «Զեր քննութեանն եմ ենթարկելու իմ Մար Աբուքը (1903 թ. Փետր. 20ի բացիկից). «Ստացայ Մար Աբուքի սրբադրական մտնւլները ... Կարո՞ղ եմ ձեզ մօտ դալ ... և որոշ տեղեկութիւններ հարցնել» (1903 թ. Սեպտ. 5ի նամակից, թիւ 7130)։ Ինչպէս երևում է 1911 թ. Յուլիսի 18ի նամակից, Մաքլէրը դիմել է Ա. Զօպանեանի միջամտութեանը Ֆրանսիական գիտական և նոյնիսկ քաղաքական շրջանակներում, որպէսզի հայերէնի դասաւանդումը չարունակուի Արևելեան լիգաների դպրոցում և մանաւանդ որպէսզի ինքը՝ Մաքլէրը, նշանակուի պաշտօնական դասախօս։ Միւս կողմից՝ նամակներից երևում է, որ Մաքլէրը մեծ հետաքրքրութեամբ հետեւել է Ֆրանսիայի Հայ մշակութային կեանքին, նպաստել է Հայերի կողմակերպած հասարակական ձեռնարկումներին՝ դասախօսութիւն, երգահանդէս, պատարագ և այլն։ Այսպէս, նրա միջամտութեամբ, դաշնակահարուհի Տիկին Le Cornec-Maclere, որ Մաքլէրի դարձուհին է եղել, իր աջակցութիւնն է բերել 1907 թ. Փետրուարի հայկական երգահանդէսին (ըստ 1907 թ. Յունուարի 8ի և Փետրուարի 19ի նամակների)։ Մաքլէրը հետեւել է կոմիտաս վարդապետի գործունէութեանը Փարիզում, ներկայ է եղել

Հայ հրաժշտութեան մասին նրա կարգացած դաստիասութիւններին և հայկական համերգներին: Նա մեծ պատասխանատուութեամբ է կատարել Ա. Զօպանեանի խմբագրած «Անահիտ» հանդէսի տնօրինութեան պաշտօնը, քաջալիքել է, նրա հրատարակած աշխատութիւններն ու ժողովածուները զրախօսել է Ֆրանսիական պարբերականներում:

Նամակները տեղեկութիւններ են հաղորդում Մաքլէրի կենսագրութեան մասին. այսպէս, 1901 թ. Յունիսին նա այցելել է Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը: 1901 թ. Յունիսի 10-ի նամակում Ա. Զօպանեանին գրել է. «Երուսաղէմում ծանօթացայ իսահակ Խապայեան եպիսկոպոսին: Նա պատրաստում է Ս. Յակոբեանց վանքի ձեռագրացուցակը: Ծանօթագրութիւնները գրում է արդի հայերէնով: Ափսո՛ս, դա չափ օգտակար չի լինի Եւրոպացի դիտնականներին»:

Հետաքրքրական կը լինէր, եթէ Մաքլէրի թղթերի մէջ յայտնուերուէին Ա. Զօպանեանից և ուրիշ բանասէրներից ստացուած նամակները:

Ստորև հրատարակուող նամակներին կցեցինք ծանօթագրութիւններ:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

Երուսաղէմ

Թիւ 1

Փարիզ (Անթուակիւր¹)

Յարգելի պարոն,
 (...) ² Տեսայ Բերարին (Bérard)³. Նա Լոհմանի (Lohmann)⁴ աշխատութեան մասին գրախօսական գրեւիլը շատ յարմար գտաւ: Ես համարեալ վերջացրել եմ գրախօսութիւնը և ձեզ կարող եմ ցոյց տալ, երբ ձեզ տեսնելու հաճոյքն ունենամ: Բերարը կարծում է նաև, որ աւելի նպատակայարմար կը լինի գրախօսութիւնը տպագրել «Revue Encyclopédique»-ում (Հանրագիտական հանգէսում): Մենք միասին կը քննենք այն հարցը, թէ անհրաժեշտ է արդեօք հրատարակել մի քանի տեսարանների լուսանկարներ:

Հաճեցէք ընդունել, յարգելի պարոն, յոյժ քերական զգացումներս հաւաստիքը:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 2

Փարիզ, 20 Փետրուար 1903

Սիրելի բարեկամ,
 Կ'ուզենայի վաղը ձեզ հետ տեսակցել, Շոգել փողոց, ժ. 3.45ին: Ձեր ուշադրութեան կը յանձնեմ իմ «Մար Աբաս»ը⁵: Դեռ այն պէտք է վերանայի Պրն. Ռիւբենս Դիւվալը (Rubens Duval) և եթէ հաւանութիւն տայ, Պրն. Բարբիէ դը Մէնարը (Barbier de Meynard) վերցնելու է Մարտ-Ապրիլի պրակում տպագրելու համար: Ուստի համբերեցէք. ինչ որ Քարիէրը⁶ չուզեց տպագրել, չուտով լոյս կը տեսնի: Մի քանի շաբաթ ևս:

Համակ ձերդ

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 3

Փարիզ, 18 Յունիս 1903

Իմ սիրելի բարեկամ,
 ... Երէկ երեկոյեան ստացայ ձեր նոր հրատարակած հատորը⁷: Բիւր շնորհակալութիւն: Նախաբանն ու ներածութիւնը շատ լաւ են: Անկեղծօրէն շնորհաւորում եմ: Մտադիր եմ ըստ հնարաւորին չուտ կարգաւ շարունակութիւնը և համոզուած եմ, որ ընթերցանութիւնը գնալով աւելի գրաւիչ է դառնալու ...

Ֆ. ՄԱՔԼԷՐ

¹ Նամակն անթուակիւր է, փոստային կնիքի տեղը պատռւած: «Յարգելի պարոն» վերտառութիւնից, նամակի ոճից և վերջաւորութեան քաղաքավարական բանաձևից կարելի է եզրակացնել, որ Մաքլէրի և Ա. Չօպանեանի ծանօթութեան սկզբնական շրջանից է:

² Բոլոր նամակների անհետաքրքրական տողերը փոխարինել ենք բաղձակէտերով:

³ Victor Bérard = Ֆրանսիացի բանասէր և հրապարակախօս, հայասէր:

⁴ Lohmann, Ernst — Գերմանացի բանասէր. թերևս խօսքը անբռն «Im Kloster zu Sis» գրքոյկի մասին է:

⁵ Մաքլէրի աշխատութիւններից է:

⁶ Ֆրանսիացի հայագէտ: Փարիզի Արևելեան կենդանի լեզուների դպրոցում երկար տարիներ դասաւանդել է գրաբար: Մահացել է 1902 թ. Յունիսի 25ին:

⁷ Ա. Չօպանեանի «Chants populaires arméniens» («Հայկական ժողովրդական երգեր») ժողովածուն:

Թիւ 4

Փարիզ, 18 Սեպտեմբեր 1903

Իմ սիրելի բարեկամ,

... Մտադիր եմ մեր պարբերականներից մէկում մի փոքրիկ յօդուած հրատարակել Էջմիածնի իրադարձութիւնների մասին⁸:

Խօսելու եմ հետեւեալ կէտերի մասին.

1. Ռուսական կառավարութեան միջամտութիւնը.

2. Միջամտութիւնից առաջ Հայերի և Ռուսների վիճակն ու յարաբերութիւնները.

3. Սիսի կաթողիկոսութեան մասին.

4. Միջամտութեան հետեւանքները Ռուսաստանի Հայերի համար.

5. Կաթողիկոսութեան հաւանական փոխադրութեան մասին.

6. Հետեւանքը:

Աշխատելու եմ մի տասը էջ գրել:

Ստոյգ տեղեկութիւնների համար յոյսս դնում եմ ձեր վրայ: Կանխապէս շնորհակալ եմ:

Ձերդ

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 5

Փարիզ, 15 Փետրուար 1904

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ «Անահիտ» ձեր ուղարկած համարները⁹: Շատ շնորհակալ եմ: Այսօր, որ չափիկի վրայ 1904ի փոխարէն տպագրուած է 1903, որովհետեւ ենթադրում եմ, որ սա 1904 թ. Յունուարի համարն է: Հոգ տարէք, որ յաջորդ համարում նման անճշտութիւն չսպրդի: [Շահան] Զրպետի մասին մեր յօդուածում նկատեցի տպագրական մի քանի վրիպակներ և բոց թողնուած տառեր: Գուցէ լաւ կը լինի դրանք նշել յաջորդ համարում, որպէսզի ընթերցողը չկարծի, թէ դրանք մեր անփութութեան կամ տգիտութեան արդիւնք սխալներ են: Ընդհանրապէս ձեզ խնդրում եմ, որ սրբագրական մամուլներն ինձ մօտ մնան գոնէ 2 կամ 3 օր, մանաւանդ երբ գիտական յօդուած ունենք, որովհետեւ տպագրութեան հարցում պէտք է ձգտել մաթեմատիկական ճշտութեան, և կարելի է հասնել դրան:

... Ես հնարաւոր ամէն ինչ կ'անեմ, որպէսզի «Անահիտ» մէջ տպագրելիք իմ յօդուածները չմնան նրան, այլ իրենց գիտական մակարդակով գրաւեն և ապահովեն նոր բաժանորդներ ...

Ֆ. ՄԱՔԼԷՐ

⁸ Մաքլէրը նկատի ունի ցարական կառավարութեան 1903 թ. Յունիսի 12ի օրէնքը, որի համաձայն Հայ Եկեղեցուց բռնագրաւում էին նրա կալուածները, ինչպէս նաեւ Հայ ծխական դպրոցները դրւում էին ժողովրդական կրթութեան նախարարութեան իրաւասութեան տակ: Շատ տեղերում ընդհարումներ են տեսել ունեցել ոստիկանութեան և Հայերի միջև: Ցետագայում ցարական կառավարութիւնը հարկադրուած է լինում տեղի տալ:

⁹ Մաքլէրը 1903-1908 թթ. եղել է Ա. Զօպանեանի խմբագրած և հրատարակած «Անահիտ» հանդէսի տնօրէնը (gérant) ինչպէս այս նամակը ցոյց է տալիս, նա լրջօրէն է հսկել հանդէսի վրայ: Նա է տուել տպագրելու թոյլատրութիւնը: Մինչ այդ նա տեսել է սրբագրական մամուլները, իր գիտողութիւնները նամակներով յայտնել է Ա. Զօպանեանին (1904 թ. Մարտի 14ի, 25ի, Յուլիսի 8ի և այլ նամակներ, որ աւելորդ համարեցինք հրատարակել):

Թիւ 6

Փարիզ, 17 Փետրուար 1904

Իմ սիրելի բարեկամ,

Շատ կը ցաւէի, եթէ իմ վերջին նամակը ձեզ վիշտ պատճառէր, և դա կարծէք երևում է երէկուայ ձեր երկտողից: Միանգամայն համոզուեցէք հակառակի մէջ: Շատ եմ ցանկանում, որ «Անահիտ»ը մեծապէս բարգաւաճի, և դրա համար ինձ վերաբերող ամէն ինչ անելու եմ, որպէսզի խնամքով պատրաստեմ իմ տուած յօդուածները...

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 7

Փարիզ, 12 Ապրիլ 1904

Իմ սիրելի բարեկամ,

... Շատ ուրախ եմ ձեր ստացած մրցանակի համար¹⁰. Ղա շատ լաւ կը լինի մանաւանդ մեր ծրագրերի համար, որովհետեւ տպաւորիչ տիպոգրա է:

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 8

Փարիզ, 5 Յունուար 1905

Սիրելի բարեկամ,

Նոր կտակարանը, որի մէջ է մտնում Ղուկասի Աւետարանը, գրուել է յունարէն և ոչ թէ եբրայեցերէն, և բոլոր լեզուներով հարիւրաւոր թարգմանութիւններ կան: Եթէ ձեզ համար ես նորից թարգմանէի, իմ թարգմանութիւնն աւելի լաւ չէր լինի, քան այն, որ կարող եմ ձեզ յանձնարարել, եթէ ցանկանում էք:

... Իմ բարեկամներից մէկը, որ լաւ երաժշտագէտ է, շատ է ցանկանում ներկայ լինել հայկական երեկոյթին: Եթէ ծրագրեր կազմելու հարցում դուք էլ խօսք ունէք ասելու, պնդեցէք, որ հնարաւորին չափ շատ հայկական երաժշտութիւն լինի. Ղա յատկապէս շատ են ցանկանում: Յուսով եմ, որ այս անգամ ևս, ինչպէս անցեալում, կը կարողանաք ինձ մի քանի տոմսակ հայթայթել...

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 9

Փարիզ, 15 Յունիս 1905

Իմ սիրելի բարեկամ,

Ձեզանից մի փոքրիկ բան եմ խնդրում. բողոքական մի հանդէսի տնօրէն, որի մասին ձեզ արդէն խօսել եմ, ինձ հետապնդում է, որպէսզի իրեն յօդուած տամ հայ մի քանի գրողների մասին: Ուստի չէի՞ք կարող ինձ նշել, թէ որտեղ կարող եմ գրական մի քանի տեղեկութիւններ գտնել, ասենք Բաֆֆու և Յ. Պարոնեանի մասին: Ես նրան կտամ հատուածներ այդ երկու հեղինակներից և կարծում եմ, որ դա նրան կը բաւարարի:

Յ. ՄԱՔԼԷՐ

¹⁰ 1904 թ. Ֆրանսիական Ակադեմիան Ա. Զօպանեանին շնորհել է «լանդ-լուա» մրցանակը նրա Chants populaires arméniens («Հայկական ժողովրդական երգեր») ֆրանսերէն ժողովածուի համար: Մրցանակը հաստատուած է ոչ Ֆրանսիական գրական գործերի լաւագոյն թարգմանութիւնների համար (Séverin, 1904, էջ 96):

Թիւ 10

Փարիզ, 1 Յուլիս 1905

Իմ սիրելի բարեկամ,

... Շատ ուրախ կը լինէի, եթէ ձեզ հետ մի քանի տեղեկութիւններ բերէիք Յ. Պարոնեանի և Ռաֆֆու վերաբերեալ կամ ինձ թելադրէիք մի-մի տեղեկութիւն իւրաքանչիւրի մասին: Այն հանդէսի տնօրէնը, որի մասին ձեզ ասել եմ, պոկ չի գալիս, և վերջապէս ուղում եմ նրան մի բան տալ, թէկուզ միայն որպէսզի հանդիստ թողնի ինձ: Միւս կողմից՝ ես ճգմուած եմ աշխատանքի տակ. արձակուրդներից առաջ ուղում եմ անպայման վերջացնել սկսուած աշխատանքները...

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 11

Փարիզ, 19 Մարտ 1906

Իմ սիրելի բարեկամ,

... Անշուշտ գիտէք, որ հայերէնի ամպիրոնի հարցը ինքնին չի կարգադրուի¹¹:

Թիւ 12

Փարիզ, 23 Մարտ 1906

Իմ սիրելի բարեկամ,

Այս առաւօտ հանդիպեցի Բերարին: Վաղը Լիոն է մեկնելու երեք դասախօսութիւն կարգաւորու: Նա շատ լաւ է համարում ձեր այն միտքը, որ հայերէնի ամպիրոնի պահպանմամբ հետաքրքրենք Քլէմանսոյին (Clemenceau)¹²: Դուք որպէս Հայ աւելի լաւ քան ոչ ոք ի վիճակի էք Քլէմանսոյի մօտ միջամտելու և նրան ցոյց տալու հայերէնի ամպիրոնը պահպանելու ողջ նշանակութիւնն ու կարևորութիւնը Արեւելքի քրիստոնեաների նկատմամբ: Ֆրանսիայի դարաւոր խնամակալութեան իրեն հաղուագիւտ մնացորդներից մէկը: Ուստի յոյսս դնում եմ ձեր ճարպկութեան և դիւանագիտութեան վրայ, որպէսզի ձեռք բերենք ցանկալի արդիւնքը:

Բերարը Լիոնից վերադառնալու է յաջորդ Չորեքշաբթի: Շատ զօհ կը լինէի, եթէ ձեր ձեռնարկումներ¹³ մասին ինձ տեղեկ պահէիք...

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 13

Փարիզ, 27 Մարտ 1906

Իմ սիրելի բարեկամ,

... Շնորհակալ եմ ձեր նամակի համար, որ ինձ մի փոքր յոյս ներշնչեց: Թատկապէս դուք որպէս Հայ պէտք է բողոքէք հայերէնի ամպիրոնի վերացման դէմ: Ամպիրոնը վերափոխել և զրկել պաշտօնական դասախօսից՝ նշանակում է այն դատապարտել շուտափոյթ վերացման:

¹¹ Հայագէտ Ա. Մեյէն, որ 1902ից ի վեր Արեւելեան լեզուների դպրոցում դասաւանդում էր հայերէն, 1905 թ. անցնում է դասախօսական այլ աշխատանքի: Ինչպէս յաջորդ նամակից կարելի է եղրակայանել, հարց է դրուել Արեւելեան լեզուների դպրոցից հանել հայերէնի ուսուցումը: Բարեբախտաբար դասաւանդումը մինչև օրս շարունակուում է:

¹² Georges Clemenceau — քաղաքական գործիչ (1841–1929). 1906–1909 թթ. եղել է Ֆրանսիական հանրապետութեան նախագահ:

¹³ Հայերէնի դասաւանդումը պահպանելու ուղղութեամբ:

ուստի դուք և ես¹⁴ չափազանցապես ենք, որպէսզի անյայտագ ձեռք բերենք ամպիրոնի պահպանումը, նրան թողնելով միշտ էլ իր ունեցած պաշտօնական բնոյթը:

Շատ ուրախ կը լինէի, եթէ այս մասին խօսէիք Բերարի հետ, որն անշուշտ լաւ խորհրդատու է. վստահ եմ, իր կողմից ջանք չի խնայի, եթէ դուք նրա հետ քննէք մեր նպատակին հասնելու համար գործադրուելիք միջոցառումները, ինչպէս նաև եթէ խօսէք Քլէմանտոյի կամ Բրիանի (Briand)¹⁵ հետ:

Մի՛ յապաղէք, օգտուեցէք Հայերին վերաբերող խնդիրներին նկատմամբ Քլէմանտոյի ցուցաբերած հետաքրքրութիւնից: Ձեզ յայտնի է, թէ Ֆրանսիայում ինչպէ՛ս նախարարը կարող է անմիջապէս տապալուել: Առիթը յարմար է: Պէտք է օգտուել:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 14

Փարիզ, 19 Մայիս 1906

Սիրելի բարեկամ,

Այս առաւօտ մի երկտող ստացայ Արեւելեան լեզուների դպրոցի քարտուղարութիւնից, որ ինձ ծանուցում է, թէ յաջորդ երկուշաբթի կարող եմ ստանալ հրամանի պատճէնը, որով ես նշանակուել եմ հայերէնի դասախօսի պաշտօնակատար: Բացի այդ, հայերէնի ամպիրոնը պահպանուում է, և իմ ռոճիկից 1000 ֆրանկ առանձնացուելու է հայերէնի գործնական պարապմունքների ուսուցչի համար: Ինչպէս տեսնում էք, դեռևս ստեղծւում են գործնական պարապմունքների ուսուցչի պաշտօններ: Շնորհակալութիւն ձեր ձեռք առած միջոցառումների համար:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 15

Փարիզ, 2 Դեկտեմբեր 1906

Իմ սիրելի բարեկամ,

Մի անգամ ևս ամբողջ սրտով շնորհաւորում եմ ձեզ երէկուայ գեղեցիկ երեկոյթի համար¹⁶: Կ'աշխատեմ այս շաբաթ կամ, ամէն պարագայում, յաջորդ կիրակի, հայկական պատարագից յետոյ այցելել կոմիտաս վարդապետին:

Չմոռանաք ինձ յայտնել կոմիտաս վարդապետի դասախօսութեան

¹⁴ Իբրև դասախօսական պաշտօնին ձգտող:

¹⁵ Aristide Briand (1862 - 1932), քաղաքական գործիչ և պետական անձնաւորութիւն. քաղմիցս եղել է Ֆրանսիական Խորհրդի անդամ և արտաքին գործերի նախարար:

¹⁶ 1906 թ. Դեկտեմբերի 1ին, կոմիտասը մի քանի ամսում պատրաստած երգչախմբով հայ ժողովրդական և եկեղեցական երգի համերգ է տուել "Salle des Agriculteurs" սրահում: Համերգին ներկայ է եղել նաև Մաքլէրը: Առաջին բաժնից յետոյ, հայ երաժշտութեան և բանաստեղծութեան մասին ֆրանսերէն լեզուով բանախօսել է Ա. Չօպանեանը:

ստորագրոյն ու ժամը¹⁷, որին ականարկեցիք ձեր բանախօսութեան մէջ¹⁸,
... Յետեւեթիւն և հազար շնորհաւորանք կ'անջնա և իմ կողմից:

Յ. ՄԱՔԼԻԻՐ

Թիւ 16

Փարիզ, 18 Յունուար 1907

Իմ սիրելի բարեկամ,

... Արարողութիւնն այնքան ուշ վերջացաւ, որ չհամարձակուեցի
այցելել կոմիտաս վարդապետին: Ասացէք նրան, որ գրի առնի առելի
համար նախատեսուած ամենագեղեցիկ կտորներից մի քանիսը:

Յ. ՄԱՔԼԻԻՐ

Թիւ 17

Glaz (Doubs), 24 Օգոստոս 1908

Իմ սիրելի բարեկամ,

... Ստացայ բանաստեղծութիւնների ձեր դիւթիշ ժողովածուն:
Մեկնելուց առաջ լուկ մի հայեացք էի դրել, սակայն որքան էլ քիչ
թերթեցի, դա էլ բաւական եղաւ, որպէսզի հիանամ դրա հմայքով և
ըմբոշխնեմ բանաստեղծութիւնների ոգին: Անկեղծօրէն շնորհաւորում
եմ ձեզ:

Ուրախ եմ, որ տեսիլ էք Բուայէին (Boyer): Դա լուկ սկիզբ է,
բայց յամենայն դէպս սկիզբ է, և դա է կարեւորը: Դուք կ'ունենաք
ազատ ունկնդիրներ. դա կը բարձրացնի ձեր դասընթացի նշանակու-
թիւնը և կարեւորութիւն կտայ այն ամէնին, ինչ վերաբերում է Հա-
յերին: Բուայէն ձեզ գործնական պարապմունքների ուսուցիչ է նշա-
նակելու Նոյեմբեր և Յունուար ամիսների համար, որովհետեւ վարձա-
տրուելու էք 1908 տարուան յատկացուած գումարից: Նա չի կարող
ձեռք տալ 1909 թուականի համար նախատեսուած գումարին: Բայց յոյս
ունեմ, և ցանկանում եմ, որ խնդիրը կարգադրուի ամբողջ ուսումնա-
կան տարուայ համար:

Ձեզ յատկապէս խնդրում եմ, որ շատ տարրական մի բան անէք,
չվախենաք նոյնը մի քանի անգամ կրկնելուց, մինչև որ որոշ դարձ-
ուածքներ ամբողջութեան մեր աշակերտների յիշողութեան մէջ:

Միւս կողմից՝ այն աշխատանքը ձեզ յարմար է, քանի որ գար-
նան սկզբին մտադիր էք էջմիածին գնալ: Այսպիսով, ձեր ծրագրերից
ոչինչ չի փոխուի, և կարող էք մի անգամ ևս գնալ հունձ քաղել հա-
յերէն հին ձեռագրերից:

Այս բոլորը ձեզ գրում եմ մտածելով, թէ դուք փարիզում էք
մնալու մեզ հետ, թէ դուք այն Հայերից չէք, որոնք օգտուելով Թուր-
քիայի նոր իրադրութիւնից, վերադառնալու են Բոսֆորի ափերը:

¹⁷ 1907 թ. Յունուարի 13ին, "Rue de la Sorbonne" դահլիճում, Արուեստի
դպրոցի վարչութեան հրաւերով կոմիտաս վարդապետը դասախօսութիւն է կար-
դացել հայկական երաժշտութեան մասին:

¹⁸ Մաքլէրը կոմիտաս վարդապետով հետաքրքրուել է իր այլ նամակնե-
րում ևս. «կոմիտաս վարդապետը դեռ երկա՞ր է մնալու Փարիզում» (1906 թ.
Դեկտեմբերի 21ի նամակում)։ «Ի՞նչ է լինում կոմիտաս վարդապետը» (1907 թ.
Յունուարի 8ի նամակում)։ Կոմիտասը Փարիզ մնացել է մինչև 1907 թ. կեսերը,
նախքան Շվեյցարիա մեկնելը: Նայն տարուայ Սեպտեմբերին վերադարձել է
էջմիածին:

Շատ հաւանական է, որ եկող տարի այս ժամանակ ես էլ գնամ Էջմիածին¹⁹։ Այս մասին դեռ կը խօսենք, երբ մի քանի շաբաթից յետոյ փարիզ վերադառնամ։ Շուտով գրելու եմ կոմիտաս կամ Մեսրոպ վարդապետին. յուսով եմ, որ այդ պարտններից մէկը կը բարեհաճի պատասխանել ինձ։ Ես գնալու եմ ձեռագրեր ուսումնասիրելու և չէի ցանկանայ, որ երբ ժամանեմ, մատենադարանը փակ զանեմ, ինչպէս պատահեց անցեալ տարի վենետիկում²⁰։

Ընդունեցէք, իմ սիրելի բարեկամ, լաւագոյն զգացումներ իս հաւաստիքը։

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 18

Փարիզ, 18 Յունիս 1911

Իմ սիրելի բարեկամ,

... Խիստ զրադուած եմ [հայերէնի դասախօսի] թեկնածութեանս վերաբերող հրատապ այցելութիւններով։ Դուրեկան չէ։

Բաժմաջեանը²¹ թեկնածու է և Թերրի (Reby)²² հետ պայքարում է ինձ դէմ։

Զերդ

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 19

Փարիզ, 28 Յունիս 1911

Կը բարեհաճէի՞ք շտապ մի նամակ գրել Պրն. Բլեման Հիւարին (Clément Huart), Villersexel փողոց, Թիւ 2, և նրան յայտնել ձեր կարծիքն իմ մասին որպէս հայագէտի և հայերէնի իմ գիտելիքների մասին, և թէ ես ի՞նչ եմ արել հայերէնի և Հայերի համար և այլն։

Պրն. Հիւարը իմ գործը դասախօսական խորհրդին է ներկայաց-

¹⁹ 1909 թ. Յուլիոս-Հոկտեմբեր ամիսներին Մաքլէրը գիտական ուղևորութիւն է կատարել զէպի Էջմիածին, ուսումնասիրել է հայերէն Աւետարանի կարևորագոյն ձեռագրերը՝ յետադաշում իր հրատարակած «Le texte arménien de l'Evangile» («Աւետարանի հայերէն բնագիրը») արժէքաւոր աշխատութեան համար։ Մանրամասն տե՛ս մեր Ֆրեդերիք Մաքլէրի ուղևորութիւնը Հայաստան։ յոգուածը (Լրարեր հասարակական գիտութիւնների, Երևան, 1969, 2, էջ 95)։

Հայաստան կատարած ուղևորութեան մասին Մաքլէրը հրատարակել է «Հաշուետուութիւն» (Rapport sur une mission scientifique en Arménie russe et en Arm. turque), Փարիզ, 1911։ Էջմիածնի վանքում հանդիպել է կոմիտաս վարդապետին, որ նրան ուղեկցել է շրջակայքի այցելութիւնների, ժամանակ, հանգստի ժամերին նրան բացատրել է հայ եկեղեցական երաժշտութեան տարրերը, որ յետագայում Մաքլէրը շարադրել է իր «La musique en Arménie» («Երաժշտութիւնը Հայաստանում») աշխատութեան մէջ։

Մաքլէրի նամակում յիշատակուած Մեսրոպ վարդապետը Մեսրոպ վ. Մաքսուդեանն է, որ Փարիզում աշակերտել է Ա. Մեյէին։

²⁰ 1908 թ. Օգոստոսի 24ին Ա. Զօղանեանին գրած նամակից տեղեկանում ենք, որ Մաքլէրը 1907 թ. ամառը հայերէն ձեռագրեր ուսումնասիրելու նպատակով այցելել է Ս. Ղազարի վանքը, բայց մատենադարանը արձակուրդների պատճառով փակ է եղել։

²¹ Կարապետ Բաժմաջեան, Փարիզահայ հանգուցեալ բանասէր և պատմաբան. հրատարակել է «Բանասէր» հայագիտական հանդէսը, որ երկար կեանք չի ունեցել։

²² Վաղամեռիկ Ֆրանսիացի խոստմնալից հայագէտ։

նեխու յաջորդ շարանթ օրը և ուղղում է անպայման իմանալ ձեր կարծիքը, որ, յուսով եմ, նպաստաւոր կը լինի:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Սրտանց ձերդ

Թիւ 20

Փարիզ, 30 Յունիս 1911

Իմ սիրելի բարեկամ,
Շնորհակալութիւն ձեր նամակի համար²³: Կարծում եմ, որ դա կտայ ցանկալի արդիւնքը:

Ձեզ կը հաղորդեմ շարանթ օրուայ նիստի արդիւնքը:

... Յուլիսի 17ին գաւառից ես մենակ կը վերադառնամ Փարիզ, որպէսզի գործերս²⁴ առաջ տանեմ Ակադեմիայում (Institut) և Լուստրորութեան նախարարութիւնում ...:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 21

Փարիզ, 12 Յունիս 1911

Իմ սիրելի բարեկամ,
Կատարելագործման խորհուրդը (Conseil de perfectionnement) հայերէնի ամպիոնի դասախօսի պաշտօնը դրել է քուէարկութեան. «Առաջնութիւնը տրուում է Պրն. Մաքլէրին 6 քուէարկուներից 1 դէմի և 5ի կողմակցութեամբ ...»:

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 22

Փարիզ, 22 Յունիս 1913

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ Մարսէլ Լէարի (Marcel Léart) աւանձնատիպը²⁵, որ բարեհաճել էք ինձ ուղարկել: Ըստ իս, գործը յաջող ընթացք է ընդունուի, և ուրախ եմ ձեզ և բոլոր Հայերիդ համար, որով ինձ առանձնապէս էք սիրելի:

Շատ գոհ կը լինէի, եթէ ինձ ասէիք, թէ Վ. Բերարի և Փինոնի (R. Pinon)²⁶ զեկուցումները հրատարակուելու են արդեօք:

Ամբողջ սրտով ձերդ

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 23

Փարիզ, 20 Հոկտեմբեր 1913

Իմ սիրելի բարեկամ,
Ահա ստացայ ձեր նամակը և շնորհակալ եմ ձեր շնորհաւորանքների համար:

Շատ ուրախ եմ ձեռք բերուած արդիւնքի համար և յուսով եմ, որ դա կը լինի հայագիտութեան պատիւ բերող հրատարակութիւն: Շուտով կդամ ձեզ տեսնելու, երբ վերջացնեմ իմ «Miniatures arméniennes»

²³ Ա. Զօպանեանն իր նամակում հաւանաբար յանձնարարել է Մաքլէրին որպէս հայերէնի պաշտօնական դասախօսի, ինչպէս խնդրել էր Մաքլէրը:

²⁴ Հայերէնի պաշտօնական դասախօս նշանակուելու գործերը:

²⁵ La question arménienne, Paris, Augustin Challamel, 1913.

²⁶ Ֆրանսիացի հայասէր:

(«Հայկական մանրանկարներ») աշխատութեան ներածութեան սրբազրու-
թիւնը: Կը տեսնէք, գեղեցիկ հատոր է լինելու:

Ամբողջ սրտով ձերդ:

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 24

Փարիզ, 18 Դեկտեմբեր 1914

Իմ սիրելի բարեկամ,

Ահա երկրորդ անգամ եմ լսում, թէ Արամ Էդնայեանը²⁷ սպան-
ուել է թշնամու կողմից: Ստոյգ է արդեօք: Խորապէս տխրեցի, որով-
հետեւ սիրում եւ գնահատում էի այդ երիտասարդին: Ինձ ծառայութիւն
մատուցած կը լինէիք, եթէ կարողանայիք հաստատել կամ հերքել այդ
լուրը:

... Այնքան եմ զբաղուած այս վերջին ժամանակներս, որ երե-
կոյեան յաճախ չգիտեմ, թէ վաղն ինչ եմ անելու: Բացի այդ, օրէցօր
սպասում եմ, որ զինուորական բաժանմունքից կանչուեմ եւ երթամ մի
գնդի միանամ:

Կարող էիք ինձ ասել, թէ Էդնայեանի հայրը Փարիզում է ար-
դեօք եւ կարող է ինձ ընդունել, եթէ ցաւակցական այցելութեան գնամ
մօտը ...:

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 25

Փարիզ, 29 Յունուար 1915

Իմ սիրելի բարեկամ,

Իմացայ, որ մօտ օրերս մեկնելու էք Անգլիա: Թող տուէք՝ ձեզ
մօղթեմ բարի ճանապարհ եւ հնարաւորին չափ լրիւ յաջողութիւն ձեր
ձեռնարկումներին եւ պրպտումներին:

Շատ ուրախ կը լինէի, եթէ ինձ ասէիք, թէ ինչ արեցիք «Աղեք-
սանդրի վարք»ի կլիշէները, որ ձեզ էի յանձնել անցեալ տարի, ինչ-
պէս նաև սրբազրական մամուլները: Եթէ չուտով չէք հրատարակելու
ձեր ուսումնասիրութիւնը «Աղեքսանդրի վարք»ի մասին, ապա զգոյշ
վարուած կը լինէիք, եթէ ապահով տեղ դնէիք կամ ինձ յանձնէիք
կլիշէներն ու սրբազրական մամուլները: Դրանք մեծ գումար արժեն,
և ափսոս կը լինէր, եթէ կորցնէիք ...:

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 26

Փարիզ, 10 Փետրուար 1915

Իմ սիրելի բարեկամ,

Պրն. Ունճեանի երեխաների հասցէն է՝ Միլթոն փ., 2: Ձեզ
յանձնեցի նրա նամակը: Պէտք է օգնել նրա երեխաներին: Աւագ որ-
դուն խնդրեցի, որ մեր տուն գոյ: Ամէն շաբաթ նրան մի փոքրիկ
գումար կը նուիրեմ, կիսս էլ ամէն շաբաթ նրանց կտայ աննդամթերք,
պահածոսներ եւ այլ ուտեստեղէն: Իսրայէլի ժողովրդի ժամանակաշրջա-
նում չենք ապրում, երբ մինչև Յրդ եւ Կրդ սերնդի զաւակները քա-
ւում էին իրենց հայրերի մեղքերը: Պէտք է անմիջապէս օգնել կարօտ-
եալներին ...:

Յ. ՄԱՔԼԷՐ

²⁷ Ունի թարգմանութիւններ, ինչպէս «Le Synaxaire arménien».

Թիւ 27

Փարիզ, 10 Յուլիս 1915
(Այցեւորման վրայ)

Յրէտէրիք Մաքլէրն իր ջերմ շնորհաւորանքն ու անկեղծ շնորհակալութիւնն է յայտնում հիանալի զեկուցման համար²⁸, որ լսելու, առաւել ևս վերընթերցելու հաճոյքն ունեցաւ:

Թիւ 28

Փարիզ, 18 Դեկտեմբեր 1915

Իմ սիրելի բարեկամ,

Իմ բարեկամներից մէկը հաւանաբար զեկուցում է կարդալու Հայաստանի մասին: Յանկանում է, որ լուսանկարներ ցուցադրուեն իրեն փաստ: Անգաղտնապահութիւն չէ՞ր լինի արդեօք մեր կողմից, եթէ խնդրէինք, որ մեզ տրամադրէիք երեսունի հափ պատրաստի տիպոգրաֆներ . . . :

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 29

Փարիզ, 16 Յունուար 1916

Իմ սիրելի բարեկամ,

Եթէ ձեզ չեմ խանգարում, յաջորդ երեքշաբթի Ժ. Չին ձեզ կը վերադարձնեմ տիպոգրաֆները: Շնորհակալ եմ, որ դրանք ինձ վրաստանցիք: Ձեր բարեացակամութեան շնորհիւ ցուցադրումները հետաքրքրեցին ներկաներին: Ըստ իս, հայկական դատի պաշտպանութեան համար լուս եղաւ, որ Ֆրանսիական հասարակական այս միջոցառումը տեղի ունեցաւ յօգուտ ձեր խեղճ ժողովրդի: Հասարակութեան հոծ բազմութիւնը վկայում էր, որ Պրն. Դումենրգն ու ես չենք սխալուել . . .

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 30

Փարիզ, 31 Յունուար 1916

Իմ սիրելի բարեկամ,

Ահա ստացայ ձեր երկտողը և անմիջապէս պատասխանում եմ:

Պրն. Դումենրգը զեկուցումից յետոյ շատ քիչ ֆնաց Փարիզում: Նա վերադարձաւ Մոնթորան՝ իր դասաւանդումը և ուսումնական մասի վարիչի պաշտօնը շարունակելու: Նա վերջին անգամ վերանայելու է իր զեկուցումը և ձեռագրից ինձ ուղարկելու է մի օրինակ, որպէսզի սրբագրեմ, լրացնեմ ու տպագրել տամ "Foi et Vie" պարբերականում առանձին պրակով: Հենց որ լոյս տեսնի, ձեզ տեղեակ կը պահեմ . . .

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 31

Փարիզ, 25 Մարտ 1916

Իմ սիրելի բարեկամ,

Պրն. Փալ Դումենրգն ինձ յանձնարարում է ձեզ հարցնել, թէ Ապրիլի 9ին Սարգսնում կայանալիք հայասիրական հաւաքոյթի կազմակերպիչը դո՞ւք էք արդեօք: Եթէ այո, նա ուզում է իմանալ, թէ դահլիճում նիստի ծրագիրը վաճառող Հայ օրիորդները կարո՞ղ են ներկաներին բաժանել Պրն. Դումենրգի զեկուցման տպագիր օրինակները: Ձե-

²⁸ 1915 թ. Մայիսի 25ին Ա. Զօպանեանը կարդացել է "L'Arménie sous le joug ture" (Հայաստանը թուրքական լծի տակ) զեկուցումը, որ յետոյ տպագրուել է:

կուցումը հրատարակել է «Foi et Vie»-ն, և Փարիզում ամենայն հուշահանդեսները կը ստացուի Ապրիլի 6-ին. ուստի հնարաւոր կը լինի յանձնել սիրելի օրիորդներին . . . :

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 32

Փարիզ, 8 Նոյեմբեր 1917

Իմ սիրելի բարեկամ,

. . . Կ'աշխատեմ Շտրաթ երեկոյեան ձեզ հետ լինել²⁹: Իսկ եթէ չկարողանամ ներկայ լինել ձեր նահատակների յիշատակի յաւերժացմանը, բարեհաճեցէք իմ բացակայութիւնը համարել ոչ թէ անտարբերութիւն, այլ անողորմ փաստ իմ չափազանց զբաղուածութեան: Անհրաւիր զոքանչս ծանր հիւանդ են, կինս արտակարգ ծանրաբեռնուած է աշխատանքով: Որքան կարող եմ, հնչաւոյնում եմ նրա գործը:

Ձեզ ամբողջ սրտով նուիրուած

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 33

Փարիզ, 15 Նոյեմբեր 1917

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ ձեր երկտողը: Շատ եմ ցաւում, որ այժմ ոչինչ չեմ կարող գրել ձեզ համար³⁰: Ամբողջ ընտանիքս հիւանդ է . . . Իմ լուսութիւնը ոչինչ չի փոխի ձեր և Հայերի դատի նկատմամբ իմ տածած զգացումներին:

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 34

Փարիզ, 17 Նոյեմբեր 1918

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ ամսի 13ի ձեր նամակը և անհունօրէն շնորհակալ եմ: Առանձնապէս շնորհակալ եմ շնորհաւորանքների համար, որ բարեհաճել էք յայտնել: Ֆրանսիական յաղթանակի դափնեպսակն անաւարակօրէն լինելու է տղնուտղարմ Հայաստանի վերջնական ազատագրումը:

Հինգշաբթի օր դուք ինձ խօսեցիք զհեկուցումների մի ծրագրի մասին, որ տեղի է ունենալու Հայ մատաւորականների ընկերութեան հովանաւորութեան ներքոյ, և պատիւ արեցիք ինձանից մի զհեկուցում խնդրելու: Ես չեմ սիրում հասարակութեան առաջ հանդէս գալ: Սակայն յօգուտ Հայաստանի խօսելու պարտականութիւնից չեմ կարող խուսափել . . . եթէ երբեք դեռ ես չէք հրաժարուել զհեկուցումների կազմակերպելու մտադրութիւնից: Անհրաժեշտ է, որ յայտնէք թէ ի՞նչ էք ակնկալում ինձանից:

Ձեր նամակն ստանալուց յետոյ իրադարձութիւններն այնպիսի ընթացք ստացան, որ թերեւ հրաժարուէք ծրագրուած զհեկուցումներից . . . :

Յ. ՄԱՔԼԷՐ

²⁹ Ֆրանսիայում Նոյեմբերի 11ը «մեռելոց» է:

³⁰ «Վերածնունդ» հանդէսի 1918 թ. 1-2 բացառիկ համարում ապագրուած են Եւրոպայի հայաստեանների կազմակերպչականները Հայ Ժողովրդին: Մաղթանքներն ստացուել են, ինչպէս այս նամակից էլ է երևում, խմբագիր Ա. Զօւլանեանի խնդրանքով:

Թիւ 35

Փարիզ, 16 Փետրուար 1919

Իմ սիրելի բարեկամ,

Քիչ առաջ ստացայ «La Roseraie d'Arménie» (սլավոնական շառաւիղ) ձեր զեղեցիկ հատորը: Ինչ հայկազ գիրք, և որքան շնորհակալ եմ, որ մտածել էք ինձ էլ ուղարկել մի օրինակ:

Նախ՝ այն կը կարդամ: Այնուհետեւ, ինչպէս մի անգամ խօսել էինք, դրա մասին տեղեկութիւն կտամ «Revue d'histoire des Religions» հանդէսում:

Ինձ թւում է, որ ձեր գիրքը հրապարակ է գալիս աւելի քան երեք պատեհ մամանակին և լայնօրէն նպաստելու է, մաղթում եմ և յոյս ունեմ, աւելի լաւ ճանաչել և գնահատել տալու Հայ հանճարն իր բազմապիսի արտայայտութիւններով . . . :

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 36

Փարիզ, 18 Դեկտեմբեր 1920

Իմ սիրելի բարեկամ,

Մի քանի շաբաթ առաջ Պրն. Մեյէն ձեզ ուղարկել էր մի շրջաբերական, որով ծանուցում էր «Société des Études Arméniennes» (Հայագիտական ընկերութեան) այնպապ ուսնողման մասին: Դա այժմ իրականութիւն է, և Ընկերութիւնը հրատարակելու է «Revue des Études Arméniennes» (Հայագիտական հանդէս) խորագրով մի պարբերական, երբ նրա նիւթական միջոցները թոյլ տան³¹ . . . Բարեհաճեցէք այս մասին խօսել ձեր շրջապատում և շատերին անդամագրել նոր Ընկերութեան:

Ինձ թոյլ եմ տալիս ձեզ տեղեկացնելու, որ Կիրակի, Փետրուարի 8ին, երեկոյեան Ժ. 4ին «Église des billets» եկեղեցիում խօսելու եմ Հայոց եկեղեցու մասին³² . . . :

Յ. ՄԱՔԼԷՐ

Թիւ 37

Փարիզ, 15 Մայիս 1929

Իմ սիրելի բարեկամ,

. . . Այժմ շատ եմ զբաղուած Հայագիտական հանդէսի 1929 թ. առաջին պրակի պատրաստութեամբ: Դա լինելու է մի չքեղ պրակ, ճախօրէն զարդարուած և պատկերազարդ, Հայագիտական ընկերութեան գոյութեան 10րդ տարեդարձին նուիրուած: Ուրախ եմ, որ դուք մեզ հաւատարիմ էք մնում, կանոնաւոր կերպով մուծում ձեր անդամավճարը, և մտածում եմ, որ տասնամեայ յորելեանի առթիւ նոր անդամներ կը սիրաշահէք մեզ³³ . . . :

Յ. ՄԱՔԼԷՐ

³¹ Հայագիտական ընկերութիւնն ստեղծուել է 1920 թ. Յունուարի 9ին Ֆրանսիացի մի խումբ հայագէտների և հայասէրների ջանքերով: Անդամակցել են նաև քաղմաթիւ Հայեր: Ընկերութիւնը հրատարակել է իր պարբերականը՝ Հայագիտական հանդէսը, որ Ընկերութեան հետ միասին գոյատևել է մինչև 1933 թ.: Հայագիտական ընկերութեան և Հայագիտական հանդէսի մասին աւելի մանրամասն տե՛ս մեր փարիզի Հայագիտական ընկերութեան և Հայագիտական հանդէսի մասին յօդուածը, ուր մանրամասն ներկայացւած է նաև Հանդէսի մասնագիտական բովանդակութիւնը (սփամա-բանասիրական հանդէս, Երևան, 1965, թ. 2, էջ 154 . . .):

³² Մաքլէրը յետագայում հրատարակել է իր զեկուցումը՝ «L'Eglise Arménienne» («Հայ եկեղեցին»), Փարիզ, 1920, 40 էջ:

³³ Անդամների թիւը, որով և նրանց մուծած անդամավճարները գումարն ու նուիրատուութիւնները կենսական նշանակութիւն են ունեցել Հայագիտական ընկերութեան հանդէսի հրատարակութեան համար:

Իմ սիրելի բարեկամ,

Ստացայ ամսիս 19ի ձեր նամակը, որին շտապ պատասխանում եմ։ Վերջին տարիներս իմ հրատարակիչներին միշտ տուել եմ փարիզի հայկական թերթերի հասցէները, որպէսզի նրանց ուղարկուեն իմ հրատարակութիւնները։ Սակայն այդ նոյն հրատարակիչները հետզհետէ նկատել են, որ «Նոր Երկիր»ը և «Ապագան» չէին գրախօսում իմ աշխատութիւնները, մինչդեռ «Յառաջ»ը և «Le Foyer»-ն կանոնաւոր կերպով գրախօսութիւններ են տպագրում գրքերիս մասին։ Եւ իրենք՝ հրատարակիչներն են ցուցակից դուրս հանել չգրախօսող լրագիրները։ Տեսնում էք, որ ես մեղաւոր չեմ այս հարցում։

Երէկ ձեզ ուղարկեցի «Amira»-ն։ Երէկ խնդրեցի նաև Geuthner-ին³⁴, որ հրաժարուի իր որոշումից, և պատուիրեցի ձեզ ուղարկել տալ՝ 1. Trois conférences sur l'Arménie faites à l'Université de Strasbourg («Եւթրատուրդի համալսարանում կարդացուած երեք գեկուցում Հայաստանի մասին»), 2. Contes arméniens («Հայկական հէքիաթներ»), 3. L'enluminure profane arménienne («Հայ աշխարհիկ մանրանկարչութիւն») աշխատանքներ։ Խնդրում եմ, որ դրանց ստացումն ինձ յայտնէք և բարեհաճէք դրանք աղբարարել «Ապագայ»ում։

Մի ուրիշ բան. Հայագիտական ընկերութիւնը 1929 թ. իր գոյութեան 10րդ տարեգարծը նշելու է մի խնճոյքով, որ տեղի է ունենալու Նոյեմբերին։ Ընկերութեան ղեկավարութիւնը որոշեց այդ առթիւ հրատարակել Հայագիտական հանդէսի մի չքեղ պրակ։ Մեզ պէտք կը լինի մօտաւորապէս 30,000 ֆրանկ այդ պրակի հրատարակութեան համար, որն ամբողջովին նուիրուած է լինելու հայ ազգին։ Ձեզ խընդրում եմ, որ բարեհաճէք «Ապագայ»ում մի կոչ հրատարակել այս արտակարգ պրակի օգտին, և մեզ օգնէք ձեռք բերելու այդ մեծ ծախսին անհրաժեշտ գումարը։ Ի միջի այլոց, դրանում լինելու են շատ գեղեցիկ լուսանկարներ³⁵։ Յոյսս դնում եմ ձեր վրայ։ Իրականում դուք ծառայութիւն մատուցած կը լինէք ոչ թէ մեզ՝ Ֆրանսիացիներին, այլ հայկական դատին . . . :

Ֆ. ՄԱՔԼԷՐ

Իմ սիրելի բարեկամ,

. . . Շատ շնորհակալ եմ, որ «Ապագայ»ում կոչ էք հրատարակել յօդուտ Հայագիտական ընկերութեան։ Յուսով եմ, որ ձեր կոչը լսելի կը լինի։

Անյապաղ գրելու եմ Էռնէսթ Լըոուի գրախանութին, որպէսզի իմ «Dews arméniens» («Հայկական դէքեր») աշխատութիւնից մի օրինակ ուղարկուի ձեզ՝ «Անահիտ»ում գրախօսելու համար . . . :

Ֆ. ՄԱՔԼԷՐ

³⁴ Ֆրանսիացի հրատարակիչ։

³⁵ Հանդէսի այդ պրակը լոյս է տեսել 1929 թ., հատ. Թ., պրակ 2, 340 էջ։